ցեալ, ուրեմն մի՛ լինիցի զարմանք և ոչ ընդդէմ կամաց ընթերցողիդ, զի ես աղաչելով 'ի յայսմ առ ամենայն ընթերցողք սմայ և լսողք զի մի՛ նախանձեսցի 'ի վերայ գրեցելոյ իմոյ և մի՛ արասցէ զիս անարժան 'ի բարի գործութենէ յայսմանէ 'ի պատճառն, թէ զի արդ յինքն ընթերցողն յառաջագոյն ոչ գրեաց, այլ ես մի՛ 'ի փոքրականց ձեր մարդ գոլով թէպէտ ճանաչելով բնական բնութիւնն իմ, որպէս 'ի վեր պատմեցի, այլ ես ո՛չ կարեմ փախչիլ 'ի բնութենէ մարդոյ և ո՛չ ուրանալ ներգործութիւն բնութեան իմոյ, և հասարակապէս բնականի, եթէ ո՛չ խոստովանիմ առաջի Աստուծոյ և ձեր արդարն, զի ներգործութիւն իմոյս փոփոխական բնութեան 'ի վերայ այս մտածութեան ո՛չ շաղախեցաւ 'ի ցանկութիւն ինչ, զի խորհիցեմ զիս իբր իմաստուն և կամ առաջակայ և գիտուն և կամ արարիւց բանն իմ այն, որ այլ ոք ո՛չ կարեն առնել. քաւ մի՛ լիցի, եթէ ո՛չ այն քան համարձակեցայ մինչև 'ի միտս իմ հաւանեցայ, զի եղբարք իմ որդիք Հայոց մոռացեալ են 'ի միտս իւրեանց առնելոյ հնարքն փրկելոյ զանձինս իւրեանց 'ի ծառայութենէ այլ ազգաց, 'ի պատճառէ վաղընջոց կալով ներ լծոյ ծառայութեան՝ գուցէ ուսեալ իցեն նոքայ ծառայական կենաց, և ամենայն երկայն ժամանակաւ ուսմունք լինիլ կարէ իբր բնութիւն մարդոյ, և թուի ինձ զի ունիմ